

Թիւ 27199  
Փետրուար 28, 1981

Արժանաշնորհ  
Տ. Զենոք ՔՇՆ. Նալպանտեան  
Հովհան Ս. Յարութիւն Եկեղեցւոյ  
Նախագահ ծխական Խորհուրդի  
Սառւթ Միլուոքի.

Սիրելի Տէր Զենոք,

Ստացած ենք Փետրուար 5, 1981 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը  
տեղեկացնէք թէ ձեր նախագահութեամբ Յունուար 28ին գումարուած է հա-  
մայնքի ծխական ժողովը եւ կատարուած ծխական Խորհուրդի անդամներու  
ընտրութիւնը:

Որպէս զի վաւերացնենք ծխական Խորհուրդի նորընտիր անդամները,  
համեցէք ներփակեալ Առաջնորդարանի տեղեկագիրը ամբողջացնել --էջ 2,  
3 եւ 4--, ստորագրել տալ նշուած անձերուն կողմէ եւ փութով վերա-  
դարձնել մեզի:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք որ Առաջնորդին կողմէ  
ծխական Խորհուրդի նորընտիր անդամները վաւերացնելէ եաք միայն նո-  
րընտիր անդամները կրնան պաշտօնավարել եւ իրենց դիւանը ընտրել: Կը  
հրահանգենք որ չեղեալ նկատէք արդէն իսկ կազմուած ծխական Խորհուր-  
դի դիւանը եւ սպասել մեր վաւերացման պաշտօնագրին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՒՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ